ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/43

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Բողոք բերող՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի,
Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացուցիչ՝ Ժ. Դադիյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնանշման հարցում, հողաբարելավման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 03.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.06.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/8832-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է դրանում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 03.06.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

04.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/43 համարի ծածկագիրը:

10.06.2021թ.-ին, 18.06.2021թ.-ին և 25.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.06.2021թ.-ին:

2. <u>«Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն 03.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն՝ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Ա. Արմենակյան 129 հասցեում, հայտարարել է՝ «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով հրատապ բաց մրցույթ /Հողաբարելավման աշխատանքների կատարման/

Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ են ներկայացրել Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ, Արարատի Ջերմատնտեսություն ՓԲԸ, Շինարար Ագրո ՍՊԸ: ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2021թ. տեղի ունեցած նիստի 2 արձանագրությամբ ընտրված

մասնակից է ճանաչվել Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ն որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

ՀՀ Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ հաշվառված է 2016-01-11 համար 51.883999: 27.01.2021թ. գործունեությունը վերսկսելու վերաբերյալ հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարություն: 27.01.2021թ.-ին հայտարարությունը ներկայացնելուց հետո հարկային էլեկտրոնային համակարգում եղել է գործող կարգավիճակում, սակայն պետական գրանցման ռեգիստրում գրանցումից դուրս գալուց հետո հարկային էլեկտրոնային ծրագրում պետք է նշվի հաշվառումից հանված, որի դեպքում չի թույլատրվում ներկայացնել հաշվետվություններ: Սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել հաշվետվություն ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի վերաբերյալ, տվյալ ժամանակահատվածում պատշաճ կերպով վճարել է առաջացած հարկերը: «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների տվյալների գնահատման արդյունքում Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն: ՀՀ Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում կազմակերպության կարգավիճակը նշված է հաշվառումից հանված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել է մասնակցի (մասնակիցների) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: 27.05.2021թ. տեղի ունեցած նիստի 4 արձանագրությամբ տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.մայիսի 4-ի 526-ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ կետը Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտը մերժել:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

3. <u>Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.06.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/8976-2021 գրությամբ դիմել է Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կողմից 03.06.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 08.06.2021թ.-ին թիվ 1-01/27Ա/168-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր սույն թվականի հունիսի 04-ի գրության տեղեկացնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ «ԲԾԻԳ» ՊՀ) կողմից կազմակերպված «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ գնման ընթացակարգ) մասնակից Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող՝ Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի կարգավիճակը ՀՀ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում նշված է եղել հաշվառումից հանված (քաղվածք առ 24.05.2021թ. կցվում է):

Սույն թվականի մայիսի 27-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որի ընթացքում գնահատող հանձնաժողովը Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտը մերժել է: Հիմք ընդունելով ՀՀ գնումների օրենսդրությունը, «ԲԾԻԳ» ՊՀ-ն սույն թվականի հունիսի 01-ի ԻԲ1-01/27Ա/159-21 գրությամբ դիմել է ֆինանսների նախարարություն՝ առաջարկելով Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ին ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կից Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի վերաբերյալ, ինչպես նաև գնման ընթացակարգի արձանագրությունների պատճենները:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հողաբարելավման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն:

iii. «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների տվյալների գնահատման արդյունքում «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում կազմակերպության կարգավիճակը նշված է հաշվառումից հանված:

Նույն արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, որոշել է համապատասխան ճշտումներ կատարել հայտի ներկայացման օրվա դրությամբ Մասնակցի կարգավիճակի և վերջինիս հարկային պարտավորությունների վերաբերյալ:

v. Հանձնաժողովի քարտուղար Լ. Մկրտչյանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, 24.05.2021թ.-ին հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ ՊԵԿ) և խնդրել է տրամադրել «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա՝ 16.05.2021թ.-ի դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն:

vi. ՊԵԿ-ի կողմից 24.05.2021թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

vii. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի կողմից տրամադրված քաղվածքի համաձայն՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն 24.05.2021թ.-ի դրությամբ հանված է հաշվառումից: Վերջինս հաշվառումից հանվել է 19.04.2018թ.-ին:

viii. Հանձնաժողովի 27.05.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող՝ ներկայացված տեղեկատվությամբ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կարգավիճակը նշված է՝ հաշվառումից հանված:

Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, որոշել է «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կողմից 03.06.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականություն-ները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական

իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից Հողաբարելավման

աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները

որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի

ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից Հողաբարելավման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների տվյալների գնահատման արդյունքում «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում կազմակերպության կարգավիճակը նշված է հաշվառումից հանված, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, որոշել է համապատասխան ճշտումներ կատարել հայտի ներկայացման օրվա դրությամբ Մասնակցի կարգավիճակի և վերջինիս հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՊԵԿ-ի կողմից 24.05.2021թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի: ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի կողմից տրամադրված քաղվածքի համաձայն՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ն 24.05.2021թ.-ի դրությամբ հանված է հաշվառումից: Վերջինս հաշվառումից հանվել է 19.04.2018թ.-ին: Հանձնաժողովի

27.05.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, որոշել է «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտը մերժել, քանի որ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող՝ ներկայացված տեղեկատվությամբ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կարգավիճակը նշված է՝ հաշվառումից հանված:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմերի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված տվյալների իսկությունը հանձնաժողովը կարող էր ստուգել կիրառելով միայն Կարգի 67-րդ կետի դրույթները՝ պատճառաբանված որոշման դեպքում: Սակայն Հանձնաժողովը 24.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Կարգի 67-րդ կետի կիրառման անհրաժեշտության պատճառաբանությունը հիմնավորել է նրանով, որ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որը, ինչպես վերը նշվեց, հիմք չէ Կարգի 67-րդ և Հրավերի 8.21 կետերի դրույթների կիրառման համար, այլ այդ դեպքում, Հանձնաժողովի կողմից պետք է կիրառվեր Կարգի 41-րդ և Հրավերի 8.9 կետերով սահմանված դրույթները: Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել իր հայեցողական լիազորության չարաշահում:

Ընդ որում, պետք է փաստել, որ գործում առկա չէ որևէ վերաբերելի ու թույլատրելի ապացույց առ այն, որ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի կողմից տրամադրված քաղվածքը Հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան ստացված փաստաթուղթ է: Այլ կերպ ասած՝ գործով չի հիմնավորվում, որ Հանձնաժողովն այդ քաղվածքը ձեռք է բերել իր կողմից ուղարկված հարցմամբ: Ներկայացված քաղվածքն

առանց ուղեկցական գրությամբ է: Գործում առկա՝ հարցում վերտառությամբ փաստաթուղթը վերացական է, այն ուղղված չէ որոշակի անձանց խմբին: Իսկ գործում առկա քաղվածքի ուսումնասիրությամբ Բողոքներ քննող անձը փաստում է, որ այն ոչ թէ իրավասու մարմնի կողմից ստացված գրավոր փաստաթուղթ է, այլ այն ձեռք է բերվել Հանձնաժողովի կողմից՝ օգտագործելով «e-register» պաշտոնական աղբյուրը:

Հատկանշական է, որ ՊԵԿ պատասխանի և ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի կողմից տրամադրված քաղվածքի միջև առկա չէ հակասություն:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ, սույն դեպքում, Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման համար հանձնաժողովը ոչ թե պետք է սահմանափակվեր միայն «e-register» ինտերնետային կայքից ստացված տեղեկատվությամբ, այլ ՊԵԿ կողմից տրված պատասխանը հիմք հանդիսանար հանձնաժողովի համար, որպես պատճառաբանված որոշում, իսկության ստուգման վերաբերյալ հարցում ուղարկելու համար՝ այդպիսով սպառելով և ամբողջացնելով ներկայացված հայտերի գնահատումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հաշվառումից հանված լինելու հանգամանքի՝ Հանձնաժողովի կողմից որպես Մասնակցի իրականության չհամապատասխանող տվյալներ ներկայացման փաստին.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները կարող են զբաղվել ձեռնարկատիրական և չարգելված ցանկացած այլ գործունեությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը: Քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ…:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 6-րդ պարբերությունների համաձայն՝ անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր

ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է: Անհատ ձեռնարկատիրոջ կողմից, որպես ֆիզիկական անձ, ձեռնարկատիրական գործունեության իրականացումը համարվում է անհատ ձեռնարկատիրոջ իրականացրած գործունեություն:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև՝ օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Անհատ ձեռնարկատերն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում: Անհատ ձեռնարկատերն օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն՝ իր կողմից այլ անձանց պատճառված վնասի համար: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար: ...:

Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քաղաքացու (ֆիզիկական անձի) կողմից ձեռնարկատիրական գործունեություն է համարվում ինքնուրույն այն գործունեությունը, որն իրականցվում է սեփական ռիսկով և ուղղված է պարբերական շահույթ հետապնդելուն: Քաղաքացու կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու անհրաժեշտ պայման են հանդիսանում վերջինիս իրավունակությունն ու գործունակությունը և պետական հաշվառումը որպես ձեռնարկատեր:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է նաև, որ անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից փոփոխվում է ֆիզիկական անձի իրավունակության բովանդակությունը: Այսինքն՝ այդ պահից ֆիզիկական անձը հնարավորություն է ստանում ունենալու այնպիսի իրավունքներ և կրելու այնպիսի պարտականություններ, որոնք ոչ անհատ ձեռնարկատեր քաղաքացին չի կարող ունենալ կամ կրել: Մինչդեռ քաղաքացին և անհատ ձեռնարկատերը պարտավորաիրավական հարաբերություններում հանդես են գալիս որպես նույն սուբյեկտը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ քաղաքացու՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու սուբյեկտի իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պահից: Օրենսդիրը սահմանելով ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակության ու գործունակության ծագման հիմքերը, սահմանել է նաև դրանց դադարման հիմքերը, որոնք են՝

- Եթե դադարում է ֆիզիկական անձի իրավունակությունը կամ գործունակությունը,
- Ինչպես նաև՝ օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հաշվառումից հանված լինելու հանգամանքը չի կարող գնահատվել որպես Սարգիս Հարությունի Սարգսյան կողմից ներկայացված տվյալների իրականությանը չհամատապատասխանելու փաստ, քանի որ, ինչպես վերը նշվեց, անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունը կամ գործունակությունը դադարում է ոչ թե վերջինիս հաշվառումից հանելու դեպքում, այլ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման հիմքով:

Անգամ ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով է սահմանվել, որ ֆիզիկական անձին տրամադրված ՀՎՀՀ-ն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու դեպքում մնում է անփոփոխ: Անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելուց հետո կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու դեպքում նրան տրամադրվում է իր նախորդ ՀՎՀՀ-ն, որը չի փոխվում նաև այն ժամանակ, երբ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումից հետո հարկ վճարողը, որպես անհատ ձեռնարկատեր, հարկային մարմին է ներկայացնում հարկային հաշվարկներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի կողմից 03.06.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/43 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**